



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



**«ՅԻՂՐՈՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՏԵՐԻ 2022 թ.

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻԵՐԻ

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 2022 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ
ՍՊԱՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ
ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Գարնանային վարարումները ՀՀ գետերի ջրային ռեժիմի հիմնական փուլերից է, որը ձևավորվում է ձնհալքային, անձրևային և ստորերկրյա ջրերից և այդ պատճառով սովորաբար ունի խառը սնում: Գարնանային վարարումների հոսքի ծավալը, առավելագույն ելքի մեծությունը, սկիզբը և ավարտը, ձևավորման բնույթը պայմանավորված են մթնոլորտային տեղումների քանակով և բնույթով, ջերմային ռեժիմով, ձյան շերտի հաստությամբ և ջրապարունակությամբ, ռելիեֆի առանձնահատկություններով և այլն: Գարնանային վարարումների ընթացքում հանրապետության գետերով անցնում է տարեկան հոսքի ընդհանուր ծավալի 30-90%-ը, որի արժեքը պայմանավորված է առանձին գետերի ջրհավաք ավազանների տեղական գործոնների ազդեցությամբ:

Գարնանային վարարումները սկսվում են հիմնականում մարտի երրորդ-ապրիլի առաջին տասնօրյակներում: ՀՀ գետերի գերակշիռ մասում տարեկան առավելագույն ելքերը դիտվում են գարնանային վարարումների ընթացքում և հաճախ ավամերձ տարածքների, բնակավայրերի, ենթակառուցվածքների և գյուղատնտեսական հողահանդակների հեղեղման պատճառ դառնում:

Գետերում գարնանային վարարումների բնութագրերը պայմանավորվում են *նախաձմեռային* (սեպտեմբեր-նոյեմբեր), *ձմեռային* (դեկտեմբեր-մարտ) ամիսների փաստացի և *վարարումների ժամանակաշրջանի* (ապրիլ-հունիս) կանխատեսվող հիդրոոդերևութաբանական պայմանների առանձնահատկություններով:

Ստորև ներկայացվում է 2022 թվականի գարնանային վարարումների հոսքը պայմանավորող հիդրոոդերևութաբանական պայմանների նկարագիրը:

Նախաձմեռային ժամանակաշրջանի հիդրոոդերևութաբանական պայմաններ.


- *սեպտեմբերին* ամսական տեղումների քանակը Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում կազմել է նորմայի մինչև 50%-ը, Տավուշի, Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի մարզերում նորմայի 50-100%-ը, Լոռու, Կոտայքի Արարատի մարզերում և Երևանում կազմել է նորմայի 100-150%-ը,

- *հոկտեմբերին* տեղումների քանակը Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի մարզերում և Երևանում ցածր է եղել նորմայից՝ կազմելով նորմայի մինչև 70%-ը, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի և Սյունիքի մարզերում կազմել է նորմայի՝ 70-100%-ը, իսկ Լոռու, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բարձր է եղել նորմայից կազմելով 100-150%-ը, Տավուշում՝ 195%-ը,
- *նոյեմբերին* հանրապետության ողջ տարածքում ամսական տեղումների քանակը ցածր է եղել նորմայից կազմելով նորմայի 30-60%-ը, իսկ Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերում և Երևանում՝ նորմայի՝ 60-90%-ը (նկ.1):


Նախաձմեռային ժամանակահատվածի ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.

- *սեպտեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանը ամենուր նորմայից բարձր է եղել մինչև 1.5 աստիճանով,
- *հոկտեմբերին* ամենուր նորմայից ցածր է եղել մինչև 1.5 աստիճանով,
- *նոյեմբերին* հանրապետության ողջ տարածքում օդի միջին ամսական ջերմաստիճանը ամենուր նորմայից բարձր է եղել 1.0-2.3 աստիճանով (նկ.2):


Նկ. 1. Տեղումների քանակը նորմայի համեմատությամբ (%) ըստ մարզերի ա) 2021թ. սեպտեմբեր, բ) 2021թ. հոկտեմբեր գ) 2021թ. նոյեմբեր ամիսներին



Նկ.1. ք)




Նկ.1. գ)




**Նկ.2. Օդի միջին ամսական ջերմաստիճանի շեղումը նորմայից ($^{\circ}\text{C}$)
 ա) 2021թ. սեպտեմբեր, բ) 2021թ. հոկտեմբեր, գ) 2021թ. նոյեմբեր ամիսներին**

Նկ.2.ա)




Նկ.2.բ)




- մարտին (մարտի 21-ի դրությամբ)՝ տեղումների քանակը Երևանում, Արմավիրի և Արարատի մարզերում կազմել է ամսական նորմայի 80-100%-ը, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում՝ 100-150%-ը, Շիրակի, Տավուշի, Լոռու, Արագածոտնի մարզերում՝ 150-200%-ը (նկ.3 ա-դ):

**Նկ.3. Տեղումների քանակը նորմայի համեմատությամբ (%) ըստ մարզերի
 ա) 2021թ. դեկտեմբեր, բ) 2022թ. հունվար գ) 2022թ. փետրվար
 դ) 2022թ. մարտ (մարտի 21-ի դրությամբ) ամիսներին**


Նկ.3. ա)




Նկ.3. ք)



Նկ.3. գ)



Նկ.3. դ)



Ձմեռային ժամանակահատվածի ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.


- *դեկտեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանը գրեթե ամենուր բարձր է եղել նորմայից 1.0-2.5 աստիճանով, իսկ Շիրակի մարզում եղել է նորմայի սահմաններում,
- *հունվարին* նույնպես օդի միջին ամսական ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից մինչև 2.0 աստիճանով,
- *փետրվարին*՝ հանրապետության ողջ տարածքում օդի միջին ամսական ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 3.5-6.0 աստիճանով,
- *մարտին (մարտի 21-ի դրությամբ)*՝ հանրապետության տարածքում օդի միջին ամսական ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից, Շիրակի, Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում մինչև 1.5 աստիճանով, իսկ մնացած մարզերում նորմայից ցածր 1.5-3.0 աստիճանով (նկ.4 ա-դ):

**Նկ. 4. Օդի միջին ամսական ջերմաստիճանի շեղումը նորմայից (°C)
 ա) 2021թ. դեկտեմբեր, բ) 2022թ. հունվար, գ) 2022թ. փետրվար և
 դ) 2022թ. մարտ (մարտի 21-ի դրությամբ) ամիսներին**


Նկ.4. ա)




Նկ.4. բ)



Նկ.4. գ)



Նկ.4. դ)




Ձմեռային ժամանակաշրջանում դիտված հիդրոոդերևութաբանական պայմանները գարնանային վարարումների հոսքի ձևավորման վրա կունենան նորմային մոտ ազդեցություն:

Ձնածածկույթ

«Ձ գետերի գարնանային վարարումների հոսքի ծավալի և առավելագույն ելքի մեծությունը հիմնականում կախված է վարարումներին նախորդած ժամանակահատվածում կուտակված ձյան քանակից և ջրապարունակությունից, ինչպես նաև գարնանային վարարումների ժամանակահատվածում դիտվող ջերմային և խոնավության պայմաններից:


Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը հանրապետության տարածքում, ըստ բարձրության, յուրաքանչյուր ամսվա 25-ի դրությամբ տրված է նկար 5-ում (ա - դ):

Նկ.5.ա) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2021թ. դեկտեմբերի 25




2021 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձյան ծածկ առկա է եղել 1700 մետրից ավելի բարձրություններում, մինչև այդ բարձրության շրջաններում ձյան ծածկն հիմնականում բացակայել է: Արագած բ/լ կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 112սմ, իսկ մյուս օդերևութաբանական կայանների տվյալների համաձայն ձյան շերտի բարձրությունը տատանվել է 6սմ-ից 28սմ-ի սահմաններում, Աշոցքում, Հրազդանում, Ջերմուկում կազմել է 28սմ, Անանուն Լ-ցքում, Ապարանում, Մասրիկում կազմել է 10-12սմ, Ամբերդում, Սևանում՝ 18-21սմ: Դեկտեմբերի երրորդ տասնօրյակի ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունները նորմաների նկատմամբ Ամասիայում, Աշոցքում, Հրազդանում, Մասրիկում, Ամբերդում, Արագած բ/լ կայանում կազմել են 100-140%, Ապարան, Ջերմուկ, Անանուն Լ-ցք, Մարտունի օդերևութաբանական կայաններում՝ 40-80%:

Նկ.5.բ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2022թ. հունվարի 25




2022 թվականի հունվարի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում մինչև 1300մ բարձրությունները ձնածածկույթը հիմնականում բացակայել է, և ձնածածկ առկա է եղել 1300 մետրից ավելի բարձրություններում: Ստեփանավան, Մարտունի, Գավառ, Ուրցաձոր, Գորիս, Սիսիան կայաններում ձյան շերտի բարձրությունը կազմել է մինչև 10սմ, Գյումրի, Սևան, Մասրիկ՝ 17-20սմ, Ամասիա, Աշոցք, Հրազդան, Ապարան, Ջերմուկ, Ամբերդ կայաններում՝ 35-75սմ, Արագած Բ/Լ կայանում՝ 117սմ: Հունվարի երրորդ տասնօրյակում ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունները նորմանների նկատմամբ կազմել են՝ Մարտունիում, Գավառում նորմայի՝ 30-40%, Գյումրիում, Ամասիայում, Աշոցքում, Հրազդանում, Ֆանտանում, Մասրիկում, Ամբերդում, Ջերմուկում, գորիսում, Սիսիանում, Արագած Բ/Լ կայանում՝ 80-130%, Ապարանում, Սևանում՝ 150-180%:

Նկ.5.գ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2022թ. փետրվարի 25



2022 թվականի փետրվարի 25-ի դրությամբ ձնածածկ առկա է եղել հիմնականում 1800 մետրից ավելի բարձրություններում և ձյան շերտի միջին տասնորյակային բարձրությունները հանրապետություն ողջ տարածքում ցածր են եղել նորմաներից: Ձյան շերտի միջին տասնորյակային բարձրությունները նորմանների նկատմամբ կազմել են Գյումրիում, Մարտունիում, Մասրիկում 3-10%, Աշոցքում, Ապարանում, Անանուն լ-քում՝ 25-40%, Ամասիայում, Արթիկում, Սևանում, Հրազդանում, Ֆանտանում, Ջերմուկում, Ամբերդում, Արագած ր/լ կայանում 50-80%:

Նկ.5.դ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2022թ. մարտի 21



2022թ. մարտի 21-ի դրությամբ հանրապետության տարածքում գրեթե ամենուր առկա է եղել ձնածածկ: Մարտի երկրորդ տասնօրյակում ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունները հիմնականում գերազանցել են նորման, առանձին շրջաններում մի քանի անգամ: Գյումրի, Ֆանտան Եղվարդ, Թալին, Անանուն Լ-ցք օդերևութաբանական կայաններում մարտի երկրորդ տասնօրյակի ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունները կազմել են նորմաների մինչև 70%-ը, Արթիկ, Ամասիա, Աշոցք, Մասրիկ, Հրազդան, Սեմյոնովկա, Ապարան, Ջերմուկ, Սիսիան, Արագած ք/լ կայաններում՝ 105-135%, Սևան, Շորժա, Գավառ, Գորիս, Ամբերդ օդերևութաբանական կայաններում 150-175%, Դիլիջան, Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր կայաններում նորման գերազանցել են 3-7 անգամ:

Այսպիսով, գերազանցանքներում կուտակված ձյան պաշարները, կախված վարարումների ժամանակահատվածի օդերևութաբանական պայմաններից, վարարումների ժամանակաշրջանում կձևավորեն նորմայից դրական շեղումով հոսքի ծավալներ:

Վարարումների ժամանակաշրջանի կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմաններ

Ապրիլ ամսին օդի միջին ամսական ջերմաստիճանը սպասվում է նորմայից բարձր 1-2 աստիճանով, տեղումները՝ նորմայից պակաս: Մայիսին և հունիսին տեղումները և ջերմաստիճանը սպասվում են նորմայի սահմաններում:

Արդյունքում, վարարումների ժամանակաշրջանի կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմանները վարարումների հոսքի ձևավորման մեջ կունենան նորմային մոտ ազդեցություն:

ԱՄՓՈՓՈՒՄ.

1. Հաշվի առնելով դիտված և կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմանները կանխատեսվում է, որ գետերի մեծ մասում 2022թ. գարնանային վարարումների հոսքի ծավալները և առավելագույն ելքերի մեծությունները սպասվում են նորմայի սահմաններում՝ 90-100% (տես հավելվածը), համեմատության համար նշենք, որ 2021 թվականին գարնանային վարարումների հոսքի ծավալները կազմել են միջինում նորմայի 50-80%-ը:


2. Առավելագույն ելքերը հիմնականում սպասվում են ապրիլի երրորդ և մայիսի առաջին տասնօրյակում:

3. Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման և հորդառատ անձրևների դեպքում Արաքս, Դեբեդ, Փամբակ, Աղստև, Ախուրյան, Հրազդան, Ազատ, Արփա, Սևանա լճի

հարավային ափի գետերի մերձափնյա բնակավայրերի ու ցանքատարածությունների համար հնարավոր են ջրածածկումներ և ողողումներ, որոնց վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր է կազմել միայն 3-4 օր առաջ, երբ հստակ կանխատեսվում են մոտեցող տաք օդային ալիքներ և ինտենսիվ անձրևներ:

4. Սևանա լիճ

Հիմք ընդունելով եղանակի և Սևանա լիճ մուտք գործող գետային հոսքի կանխատեսումները, լճի մակերևույթից գոլորշացման մեծությունները, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխվելիք ջրի քանակը (170մլն.խոր.մ) և ոռոգման նպատակով լճից օրենքով սահմանված ջրառը՝ 170մլն.խոր.մ (ընդ որում հաշվարկներում, որպես ջրառի սկիզբ ընդունվել է հունիսի երկրորդ տասնօրյակը), 2022թ. գարնանային վարարումների ժամանակահատվածում 2022թ. ապրիլի 1-ի համեմատ կանխատեսվում է Սևանա լճի մակարդակի բարձրացում 35-40սմ-ով (1900.80-1900.85մ սահմաններում), իսկ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ լճի մակարդակը կանխատեսվում է 1900.38-1900.43մ սահմաններում, որը 2022թ. հունվարի 1-ի համեմատ կկազմի -5...0սմ (նկ.6):



Նկ.6 Վարարումների ժամանակաշրջանում և տարվա ընթացքում Սևանա լճի մակարդակի փոփոխությունը 2002-2022թթ.

5. Զրամբարներ

Հիմք ընդունելով այն, որ որպես կանոն ջրամբարներից ջրառը իրականացվում է հունիսի առաջին տասնօրյակից, «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի կողմից դիտարկվող 5 խոշոր ջրամբարների 2022 թվականի առավելագույն ջրալցվածությունը կանխատեսվում է.

- ✓ Ախուրյանի ջրամբարում՝ 70-75% (368-394 մլն.մ³),
- ✓ Արփիլիճ ջրամբարում՝ 75-80% (79.0-84.0 մլն.մ³),
- ✓ Ազատի ջրամբարում՝ 100% (70.0 մլն.մ³),
- ✓ Մարմարիկի ջրամբարում՝ 100% (24.0 մլն.մ³),
- ✓ Ապարանի ջրամբարում՝ 65-70% (59.0-64.0մլն.մ³):

Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ կանխատեսումները կազմելիս հնարավորինս հաշվի են առնվել գարնանային վարարումների հոսքը ձևավորող գործոնները, որոնք ըստ անհրաժեշտության պարբերաբար կճշգրտվեն և կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի

կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ



ԼԵՎՈՆ ԱԶԻՅԱՆ

25.03.2022թ.

2022Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՇՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

№	ԳԵՏ, ԼԻՃ, ՋՐԱՄԲԱՐ	ԴԻՏԱԿԵՏ	ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԽԱԼԸ	ԲԱԶՄԱՄՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ		
					ՆՎԱԶ.	ՄԻՋԻՆ	ԱՌԱՎ.
1	2	3	4	5	6	7	8
Գարնանային վարարումների ծավալները. մլն խոր.մ							
1	Փամբակ	Շիրակամուր	43.0	11.4	7.52	44.5	87.4
2	Փամբակ	Վանաձոր	100	23.5	44.9	102	209
3	Փամբակ	Մեղրուր	143	28.8	52.8	146	275
4	Փամբակ	Թումանյան	200	35.8	64.9	190	313
5	Դեբեդ	Թումանյան	440	98.6	169	449	731
6	Դեբեդ	Ախթալա	525	111	204	532	854
7	Դեբեդ	Այրում	580	118	178	573	947
8	Լեռնաջուր	Լեռնապար	23.0	6.17	11.4	27.0	55.4
9	Տանձուր	Վանաձոր	40.0	9.60	11.0	42.3	77.6
10	Ալարեքս	Դեբեդ	33.0	5.85	10.6	30.6	58.6
11	Ձորագետ	Կաթնառար	50.0	7.65	27.3	47.4	72.7
12	Ձորագետ	Սյրեփանավան	200	35.0	71.8	195	324
13	Ձորագետ	Գարգառ	270	44.6	87.3	245	438
14	Տաշիր	Սարապովկա	50.0	13.1	14.7	46.9	91.0
15	Գարգառ	Կուրթան	20.0	5.29	4.61	23.1	42.4
16	Մարցիգետ	Թումանյան	40.0	10.5	10.3	46.6	98.9
17	Աղսբլ	Ֆիդայրովո	20.0	4.26	6.98	21.1	50.5
18	Աղսբլ	Դիլիջան	57.0	13.6	16.2	56.4	148
19	Աղսբլ	Իջևան	185	44.6	44.2	183	405
20	Բլրանգետ	Դիլիջան	14.0	3.53	3.74	15.1	26.0
21	Շամլուղ	Դիլիջան	8.00	2.64	3.09	9.22	22.6
22	Գեղիկ	Գոշ	75.0	17.1	14.4	70.1	157
23	Գեղիկ	Ճամբարակ	17.0	4.03	3.47	15.7	30.6
24	Պաղջուր	Գեղափոփ	35.0	9.90	3.42	33.3	60.9
25	Ոսկեպար	Ոսկեպար	20.0	8.46	2.70	22.6	55.4
26	Կիրանց	Աճարկուր	17.0	5.24	1.40	18.5	36.7
27	Հախում	Ծաղկավան	25.0	6.27	4.89	26.7	45.2
28	Տավուշ	Բերդ	11.0	5.08	1.55	13.3	34.2
29	Հախինջա	Այգեձոր	45.0	15.1	9.40	55.0	104
30	Նալչիգետ	Գանձաքար	10.0	3.46	2.27	12.0	23.5
31	Ախուրյան	Ամասիա	93.0	25.5	35.3	89.6	193
32	Ախուրյան	Ախուրիկ	90.0	23.4	40.1	91.0	181
33	Ձորագետ	Ձորակերպ	6.00	1.41	1.75	5.68	16.3
34	Աշոցք	Կրասար	43.0	6.36	23.6	42.9	70.1
35	Կարկաչան	Ղարիբջանյան	12.0	3.56	3.38	12.1	23.6
36	Քասախ	Վարդենիս	20.0	11.2	5.68	25.8	66.8
37	Քասախ	Աշտարակ	34.0	12.4	11.5	37.4	106
38	Թթուջուր	Թթուջուր	15.0	5.74	3.10	17.9	32.1
39	Եղիպարուշ	Եղիպարուշ	3.00	1.17	1.45	4.04	9.50
40*	Գեղարուր	Արագած	20.0	4.18	6.70	22.3	36.2
41	Շաղվարդ	Փարբի	5.00	1.50	2.55	5.60	14.2
42	Ամբերդ	Ագարակ	8.00	4.00	0.30	8.78	29.6
43	Հրազդան	Հրազդան	130	37.1	57.0	166	320
44	Հրազդան	Արգել	47.0	16.0	27.1	54.6	108
45	Հրազդան	Երևան	100	42.0	27.0	116	234
46	Մարմարիկ	Հանքավան	35.0	8.80	9.53	39.1	68.6
47	Մարմարիկ	Աղավնաձոր	95.0	27.3	34.0	114	284
48	Ծաղկամարգ	Արփավազ	22.0	4.68	7.44	21.0	36.2
49	Գոմուր	Մեղրաձոր	40.0	11.6	10.9	39.6	97.6
50	Դալար	Արգաքան	19.0	6.00	5.42	19.3	44.5
51	Արաիգետ	Արագյուղ	8.00	4.45	1.00	7.60	32.5
52	Ագար	Գառնի	70.0	16.0	36.3	77.2	155

1	2	3	4	5	6	7	8
53	Վեղի	Ուրցածոր	37.0	10.8	12.8	40.4	76.0
54	Արփա	Ջերմուկ	88.0	16.4	46.2	97.4	166
55	Արփա	Եղեգնածոր	130	51.7	27.0	145	352
56	Արփա	Արենի	250	90.2	51.0	250	612
57	Վալք	Ջառիթափ	9.50	2.87	1.96	10.0	21.3
58	Գածոր	Վերնաշեն	3.50	1.18	0.35	3.32	8.97
59	Եղեգիս	Հերմոն	80.0	20.6	19.0	78.9	178
60	Եղեգիս	Շապին	115	36.2	34.4	118	255
61	Արտաբուն	Արտաբույնք	15.0	4.11	3.93	15.3	29.9
62	Սելիմագետ	Շապին	35.0	10.9	5.84	33.4	86.2
63**	Մեղրիգետ	Լիճք	17.0	2.58	8.10	15.5	25.5
64	Մեղրիգետ	Մեղրի	60.0	19.1	18.3	56.5	115
65	Ողջի	Քաջարան	60.0	10.1	27.9	62.3	102
66	Ողջի	Կապան	190	44.4	41.0	196	384
67	Որոտան	Գորայք	65.0	15.3	28.9	63.7	113
68	Ծղուկ	Ծղուկ	38.0	11.4	15.8	36.7	88.4
69	Գորիագետ	Գորիս	4.50	2.00	1.99	4.69	12.4
70	Գեղի	Գեղի	83.0	15.1	35.9	80.9	134

* փրված է ապրիլ-օգոստոս ամիսների հոսքի կանխապեստումը և բնույթագրերը

** փրված է ապրիլ-հուլիս ամիսների հոսքի կանխապեստումը և բնույթագրերը

Սևանա լիճ թափվող գետեր							
71	Ձկնագետ	Ծովագյուղ	25.0	6.67	8.10	26.2	54.3
72	Դրախտիկ	Դրախտիկ	4.50	1.35	0.32	4.05	8.72
73	Փամբակ	Փամբակ	4.00	1.20	1.29	3.84	10.1
74	Մասրիկ	Ծովակ	38.0	6.31	17.8	37.2	70.9
75	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	11.0	2.88	2.81	11.0	23.2
76	Արծվանիստ	Արծվանիստ	6.00	2.63	1.20	5.70	18.0
77	Վարդենիս	Վարդենիկ	35.0	7.03	17.9	33.6	55.4
78	Մարտունի	Գեղհովիտ	33.0	7.31	16.3	32.4	64.5
79	Արգիճի	Վերին Գեղաշեն	117	27.3	54.3	122	291
80	Ծաղկաշեն	Վաղաշեն	32.0	5.66	15.7	31.6	48.4
81	Բախտրակ	Ծակքար	15.0	4.81	1.16	16.2	32.9
82	Շողվակ	Ձորագյուղ	9.00	2.70	3.35	9.23	19.9
83	Գավառագետ	Նորապոս	38.0	6.00	25.0	41.8	73.0

Առավելագույն ելքերի մեծությունները. մ ³ /վրկ							
1	Փամբակ	Շիրակամուտ	21.0	5.90	5.50	19.5	45.6
2	Փամբակ	Վանածոր	37.0	10.2	13.2	33.8	83.5
3	Փամբակ	Մեղրուտ	55.0	14.0	16.2	52.9	109
4	Փամբակ	Թումանյան	85.0	21.6	25.6	79.1	171
5	Դեբեդ	Թումանյան	205	51.3	66.0	203	477
6	Դեբեդ	Ախթալա	265	55.2	71.5	257	760
7	Դեբեդ	Ալրում	270	80.0	50.6	245	759
8	Լեռնաջուր	Լեռնապատ	9.00	2.52	3.90	9.90	24.3
9	Տանձուտ	Վանածոր	18.0	5.02	3.20	19.3	65.6
10	Ալարեքս	Դեբեդ	22.0	11.5	2.30	21.1	80.9
11	Ձորագետ	Կաթնառատ	25.0	6.63	9.60	22.3	52.4
12	Ձորագետ	Սյրեփանավան	93.0	31.0	32.7	92.9	249
13	Ձորագետ	Գարգառ	130	43.7	23.1	125	359
14	Տաշիր	Սարապովկա	30.0	18.0	4.70	33.0	122
15	Գարգառ	Կուրթան	13.0	7.77	3.90	13.9	76.0
16	Մարցիգետ	Թումանյան	27.0	10.4	4.30	30.3	93.0
17	Աղստև	Ֆիդլեյրովո	8.50	3.90	1.60	9.50	26.1
18	Աղստև	Դիլիջան	27.0	6.59	4.90	24.4	53.1
19	Աղստև	Իջևան	85.0	21.2	16.6	75.6	182
20	Բլլղանագետ	Դիլիջան	9.00	2.40	1.48	8.14	16.2
21	Շամլուղ	Դիլիջան	4.00	1.30	0.98	4.31	10.5
22	Գեղիկ	Գոշ	40.0	12.0	5.20	35.9	74.5
23	Գեղիկ	Ճամբարակ	11.0	4.25	2.10	10.4	32.4

1	2	3	4	5	6	7	8
24	Պաշտոն	Գեյտահովիտ	30.0	11.1	1.50	29.9	83.8
25	Ոսկեպար	Ոսկեպար	18.0	7.30	1.80	19.7	45.8
26	Կիրանց	Աճարկուտ	11.0	3.85	1.50	10.9	29.1
27	Հախում	Ծաղկավան	15.0	5.81	2.90	16.6	44.3
28	Տավուշ	Բերդ	12.0	5.56	1.60	11.2	35.4
29	Հախինջա	Այգեձոր	39.0	13.1	3.10	38.4	89.0
30	Նալտիգետ	Գանձաքար	8.00	3.67	1.10	7.50	24.8
31	Ախուրյան	Ամասիա	35.0	7.99	11.0	30.4	58.0
32	Ախուրյան	Ախուրիկ	67.0	21.9	15.8	60.7	182
33	Քասախ	Վարդենիս	25.0	16.6	2.90	23.2	151
34	Քասախ	Աշտարակ	60.0	19.0	7.20	50.6	130
35	Հրազդան	Հրազդան	77.0	20.6	16.5	62.8	144
36	Հրազդան	Արգել	30.0	11.0	5.60	27.7	82.1
37	Հրազդան	Երևան	65.0	30.4	22.0	59.0	174
38	Մարմարիկ	Հանքավան	17.0	3.88	3.40	16.5	33.4
39	Մարմարիկ	Աղավնաձոր	41.0	12.4	10.0	40.0	86.7
40	Գոմոր	Մեղրաձոր	15.0	5.40	2.40	15.4	50.6
41	Ազատ	Գառնի	35.0	11.2	11.8	32.5	83.9
42	Վեդի	Ուրցաձոր	22.0	5.91	5.50	17.0	45.9
43	Արփա	Ջերմուկ	47.0	11.2	18.4	49.4	91.0
44	Արփա	Եղեգնաձոր	63.0	21.0	26.5	65.6	119
45	Արփա	Արենի	120	37.0	31.6	111	199
46	Եղեգիս	Հերմոն	29.0	7.40	10.1	27.5	48.6
47	Եղեգիս	Շապին	45.0	14.7	17.8	47.6	207
48	Արտաբուն	Արտաբունք	6.00	2.00	1.28	6.14	16.9
49	Սեյմազետ	Շապին	16.0	7.58	1.60	15.9	72.4
50	Մեղրիգետ	Լիճք	5.00	0.81	1.61	4.14	7.35
51	Մեղրիգետ	Մեղրի	20.0	8.33	5.40	17.5	87.5
52	Ողջի	Քաջարան	20.0	4.22	8.70	18.3	43.9
53	Ողջի	Կասան	57.0	15.4	11.4	55.9	133
54	Ծղուկ	Ծղուկ	13.0	6.12	5.50	15.0	39.0
55	Գեղի	Գեղի	22.0	5.47	9.00	24.0	44.0

Սևանա լիճ թափվող գետեր							
56	Ձկնագետ	Ծովագյուղ	15.0	4.27	3.38	14.0	46.4
57	Դրախտիկ	Դրախտիկ	4.00	1.00	0.32	4.05	6.11
58	Փամբակ	Փամբակ	1.50	0.70	0.40	1.53	6.53
59	Մասրիկ	Ծովակ	13.0	2.80	2.91	9.73	21.5
60	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	2.50	0.90	0.55	2.80	15.4
61	Արծվանիստ	Արծվանիստ	3.00	1.00	0.86	3.12	15.3
62	Վարդենիս	Վարդենիկ	13.0	3.64	2.42	13.2	30.6
63	Մարտունի	Գեղհովիտ	14.0	3.43	5.80	13.6	26.7
64	Արգիճի	Վերին Գեյրաշեն	55.0	25.3	16.3	50.7	265
65	Ծաղկաշեն	Վաղաշեն	10.0	2.16	4.70	9.98	17.9
66	Բախտակ	Ծակքար	12.0	3.91	0.26	12.1	31.5
67	Շողվակ	Ձորագյուղ	4.50	1.50	1.22	4.86	18.2
68	Գավառագետ	Նորաբուն	17.0	6.52	5.64	16.6	72.5

Վեգետացիոն ժամանակաշրջանի (01.04-30.09) միջին ելքերի մեծությունների կանխատեսում, մ³/կրկ

1	2	3	4	5	6	7	8
1	Փամբակ	Շիրակամուկ	3.10	0.88	1.54	3.42	6.86
2	Փամբակ	Վանաձոր	6.50	1.78	4.38	8.19	16.0
3	Փամբակ	Մեղրուկ	10.0	2.19	4.43	11.7	20.8
4	Փամբակ	Թումանյան	15.0	1.92	5.80	16.1	27.0
5	Դեբեդ	Ախթալա	45.0	9.30	20.7	45.6	80.4
6	Դեբեդ	Այրում	49.0	10.4	17.7	47.9	92.2
7	Լեռնաջուր	Լեռնապար	2.00	0.40	0.98	2.17	5.27
8	Ալարեքս	Դեբեդ	2.50	0.60	1.16	2.60	5.47
9	Ձորագետ	Կաթնառար	4.00	0.70	2.51	4.20	7.02
10	Ձորագետ	Սյրեփանավան	17.0	3.00	7.10	17.0	30.3
11	Ձորագետ	Գարգառ	22.0	4.36	8.90	21.8	38.4
12	Տաշիր	Սարապովկա	3.90	1.10	1.57	4.09	9.10
13	Գարգառ	Կուրթան	1.70	0.43	0.70	1.91	3.69
14	Մարցիգետ	Թումանյան	3.60	0.97	1.03	3.95	7.25
15	Աղսարև	Ֆիդլերովո	1.50	0.38	0.72	1.81	3.68
16	Աղսարև	Դիլիջան	4.80	1.09	1.41	4.67	10.9
17	Աղսարև	Իջևան	13.5	3.40	3.70	14.7	34.0
18	Գեփիկ	Գոշ	5.80	1.38	1.20	5.53	13.2
19	Պաղջուր	Գեյրահովիտ	2.70	0.86	0.40	2.96	6.12
20	Ոսկեպար	Ոսկեպար	1.70	0.61	0.31	1.81	4.86
21	Կիրանց	Աճարկուկ	1.30	0.46	0.14	1.56	2.99
22	Հախում	Ծաղկավան	2.00	0.57	0.49	2.20	4.71
23	Տավուշ	Բերդ	1.00	0.48	0.16	1.08	3.88
24	Հախինջա	Այգեձոր	4.30	1.28	0.84	4.53	10.2
25	Ախուրյան	Ախուրիկ	9.00	2.02	4.50	8.50	16.5
26	Քասախ	Վարդենիս	1.70	0.82	0.41	1.89	4.86
27	Քասախ	Աշտարակ	4.00	1.27	1.40	4.00	11.1
28	Հրազդան	Հրազդան	12.0	2.65	5.31	12.1	23.2
29	Հրազդան	Արգել	5.00	1.02	3.08	5.09	8.81
30	Մարմարիկ	Հանքավան	2.70	0.56	0.93	2.90	5.35
31	Մարմարիկ	Աղավնաձոր	8.00	2.27	4.20	8.19	19.5
32	Դալար	Արգաքան	1.20	0.43	0.38	1.39	3.55
33	Ագար	Գառնի	6.50	1.30	2.99	6.43	10.8
34	Վեդի	Ուրցաձոր	2.30	0.75	0.38	2.38	5.43
35	Արփա	Ջերմուկ	7.50	1.25	3.90	8.03	13.5
36	Արփա	Եղեգնաձոր	15.0	3.65	2.69	14.7	36.0
37	Արփա	Արենի	20.0	5.71	4.07	20.3	42.9
38	Վալք	Ջառիթափ	0.50	0.19	0.15	0.68	1.46
39	Գլաձոր	Վերնաշեն	0.20	0.088	0.033	0.22	0.63
40	Եղեգիս	Հերմոն	6.00	1.51	2.10	6.43	13.0
41	Եղեգիս	Շափին	9.50	2.63	2.90	10.7	19.6
42	Արտաբուն	Արտաբույնք	1.10	0.32	0.32	1.19	2.47
43	Սելիմագետ	Շափին	2.30	0.70	0.47	2.41	5.79
44	Մեղրիգետ	Լիճք	1.00	0.19	0.53	1.11	1.76
45	Մեղրիգետ	Մեղրի	4.30	1.21	1.39	4.64	9.58
46	Ողջի	Քաջարան	5.50	1.16	2.20	5.90	9.08
47	Ողջի	Կապան	17.0	3.84	3.17	18.4	32.1
48	Գեղի	Գեղի	7.00	1.59	3.16	7.18	10.8
49	Որոտան	Գորհայք	6.00	0.99	2.93	5.60	9.06
50	Ծղուկ	Ծղուկ	2.30	0.79	1.03	2.28	4.74
Սևանա լիճ թափվող գետեր							
51	Ձկնագետ	Ծովագյուղ	1.70	0.60	0.60	1.83	3.70
52	Դրախտիկ	Դրախտիկ	0.30	0.10	0.030	0.29	0.61
53	Փամբակ	Փամբակ	0.30	0.14	0.12	0.33	0.73
54	Մասրիկ	Ծովակ	3.80	0.48	2.12	3.74	5.99

1	2	3	4	5	6	7	8
55	Կարճադրյուր	Կարճադրյուր	0.90	0.22	0.41	1.07	1.99
56	Արծվանիսպ	Արծվանիսպ	0.40	0.17	0.10	0.41	1.24
57	Վարդենիս	Վարդենիկ	2.50	0.60	0.61	2.47	5.20
58	Մարտունի	Գեղիովիպ	2.50	0.65	1.29	2.67	5.58
59	Արգիճի	Վերին Գեպաշեն	7.90	1.89	4.10	8.56	19.9
60	Ծաղկաշեն	Վաղաշեն	2.30	0.44	1.10	2.32	3.54
61	Բախտրակ	Ծակքար	1.00	0.33	0.12	1.09	2.24
62	Շողվակ	Ձորագյուղ	0.50	0.18	0.25	0.66	1.32
63	Գավառագետ	Նորապուս	3.70	0.48	2.95	3.94	6.61

ՋՐԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՋՐԱՄԲԱՐՆԵՐ ԵՎ ԼՃԵՐ՝ ԳԵՏԵՐՈՎ

1	2	3	4	5	6	7	8
(01.04-30.06) մլն. խմ							
1	Սևանա լիճ		430	68.2	209	410	676
2	Արփի լճի ջրմբ.		65.0	9.57	32.6	63.0	109
3	Ախուրյանի ջրմբ.		370	118	191	492	971
4	Ապարանի ջրմբ.		62.0	16.0	25.0	57.0	133
5	Ազատի ջրմբ.		80.0	18.4	36.9	87.0	161
6	Կեչուտի ջրմբ		135	25.2	73.5	149	258
7	Սպանդարյանի ջրմբ.		135	25.0	60.0	130	210
8	Ջողագի ջրմբ.		77.0	24.7	7.70	77.8	157
9	Գեղիի ջրմբ.		115	23.9	51.7	119	227
10	Հախումի ջրմբ		28.0	7.85	6.12	32.6	56.5
11	Տավուշի ջրմբ		13.0	5.46	1.71	13.7	37.5

(01.04-30.09) մ ³ /վրկ							
1	Սևանա լիճ		33.0	5.10	18.3	34.0	54.2
2	Ախուրյանի ջրմբ.		35.0	8.56	17.4	39.8	78.0
3	Ապարանի ջրմբ.		4.00	1.18	1.35	4.44	8.18

Հիդրոլոգիայի ծառայության պետ՝

Էդգար Միսակյան

Հիդրոլոգիական կանխատեսումների բաժնի պետ՝

Ամալյա Միսակյան

Թողարկվել է 25.03.2022թ.